

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ПУБЛИКАЦИИ

ՄԻՔԱՅԵԼ ԻՏԱԼԻԿՈՍԻ «ՆԵՐՔՈՂՅԱՆԸ»
ԵՎ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋԻՆ ԹԱԳԱՎՈՐԻ ԽՆԴԻՐԸ

Դեռևս միջնադարից հայտնի է, որ Կիլիկիայի հայոց պետությունը քաղաքական առումով երկու ժամանակաշրջան է ապրել՝ իշխանության և թագավորության, որ այն առաջացել է շուրջ 1080 թ. որպես իշխանություն և 1198 թ., ևս II-ի թագադրությամբ դարձել թագավորություն: Առաջինը ևս II-ն էր, որ ճանաչվեց թագավոր միջազգային առումով: Թեև բյուզանդական արքունիքը, հակառակ որ արքայական թագ ուղարկեց, ո՛չ ևս II-ին, ո՛չ էլ նրա հաջորդներին շնորհեց չառաքել (թագավոր), այլ սոսկ քրիստոնե (rex = ակեքս): Հունական աշխարհում, հետադարձում բյուզանդիայում, ճանաչում էին հայկական միայն մեկ թագավորական ղեկավար՝ Արշակունիների ղեկավարին, նրանց էին անվանում թագավոր (չառաքել): Իսկ նրանց պետությունը՝ չառաքել: Պատահական չէ, որ Մակեդոնական հարստության հարստության հայազգի Վասիլ I-ը իր վարկը բարձրացնելու, դա՛ բարձրանալը իրավական տեսակետից հիմնավորելու, ինչպես և քաղաքական մի շարք այլ նկատառումներով, իրեն հռչակեց Արշակունի¹, թեև նրա ժամանակ Արշակունիների սերունդը արդեն վերացած էր²:

Բայց այդուհանդերձ, Կիլիկիայի իշխաններից մեկը նախքան ևս II-ը հանդգնեց իրեն թագավոր հռչակել, թագավորական նշանակներ հագնել և միջազգային հարաբերություններում հանդես գալ որպես թագավոր: Դա Կոստանդին իշխանի որդի ևս I-ն էր (1129—1137 թթ.): Դեռևս նրա եղբայր Թորոս I-ը (1100—1129 թթ.) իր իշխանությանն էր կցել Սիսը և Անավարդուն, հանդգնել բյուզանդիայից անկախ քաղաքականություն վարել: Նա պարտության էր մատնել սելջուկներին: Թորոսի ձեռք բերած հաջողությունները է՛լ ավելի զարգացրեց նրա եղբայր ևս I-ը, որը հաղթելով Անտիոքի իշխան Ռաիմունդին, իրեն ենթարկեց համայն Դաշտային Կիլիկիան: Նա իրեն այնքան հզոր էր զգում, որ ձեռնարկեց Սեւեկիայի պաշարումը: Քաղաքական ու ռազմական բազում հաջողությունները նրան հիմք տվեցին վերջնականապես թոթափելու վասալական կախումը բյուզանդիայից, և այդ բանը հնարավոր էր իրականացնել Կիլիկյան հայկական պետությունը թագավորություն հռչակելով:

Վերջերս հունական բյուզանդագիտական Տարեգործում իտալուհի բյուզանդագետ Ֆրանկա Ֆուսկոն հրատարակեց մի փաստաթուղթ, որի արժեքը Կիլիկիայի հայկական պետության պատմության ուսումնասիրության համար զգալի է գերազանցատես: Խոսքը վերաբերում է Միքայիլ Դաւիթիկոսի՝ Հովհաննես Կոմնենոս կայսերը (1118—1143 թթ.) նվիրված «Ներբողյանին», որ Ֆուսկոն հրատարակել է Բուլոնիայի համալսարանի գրադարանի՝ XIII դարին վերաբերող № 2412 հունարեն ձեռագրից³:

Հոգևորական Միքայիլ Իտալիկոսը XII դարի նշանավոր հոգևոր էր և փիլիսոփա: Հիմնականում գործել է Հովհաննես II Կոմնենոսի թագավորության ժամանակ: 1143 թ. նա դարձավ Դիլիպոպոլսի եպիսկոպոս: Նրան են վերագրվում բազմաթիվ նամակներ, ճառեր և այլն: Խընդրո առարկա «Ներբողյանի» վրա ուղարկվում էր դարձրել դեռևս Պ. Համման⁴, բայց բնագիրն

¹ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 6. Բյուզանդական աղբյուրներ. գիրք Բ, Կոստանդին Միրանաժին, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի. Երևան, 1970, էջ 33:

² N. Adontz. L'age et l'origine de l'empereur Basile I (867—887).—In: Etudes arméno-byzantines, Lisbonne, 1965, p. 105.

³ Franca Fusco. Il Panegirico di Michele Italico per Giovanni Comneno. 'Εταιρεία 'Εταιρείας Βυζαντινῶν Σπουδῶν, τόμ. ΑΨ. 'Αθῆναι. 1969—1970. σελ. 146—169.

⁴ P. Lamm a. La spedizione di Giovanni Comneno in Cilicia ed in Siria in un Panegirico inedito di Michele Italico.—Mem. Acc. sc. Bologna. Cl. sc. mor. s. V. vol.

ստաջին անգամ հրատարակեց Ֆ. Ֆուսկոն Այնտեղ փառաբանվում են Հովհաննես կայսեր ձեռք լեկա: Հուլիանները 1136—1138 թթ. Կիլիկիա և Ասորիք կատարած արշավանքների ժամանակ, երբ, ինչպես հայտնի է, կայսեր շանքերով վերացվեց Կիլիկիայի հայկական պետությունը, իսկ Լևոն I-ը է նրա որդիներն Ռորոսն ու Ռուրենը տարվեցին Կոստանդնուպոլիս: Այդ դեպքերի մասին հայկական աղբյուրների տեղեկությունները շատ սուղ են: Բյուզանդական հեղինակները, որոնք ամենայն հավանականությամբ իրենց ձեռքի տակ ունեցել են Հովհաննես կայսեր Կիլիկիայից և Ասորիքից բյուզանդական արքունիք ուղարկած պաշտոնական գեկուցագրերը, տալիս են շատ արժեքավոր տեղեկություններ: Նրանց վրա հաստուկ կանց առեւել, հարկավ, անիմաստ է, քանի որ այդ տվյալները լայնորեն օգտագործված են բաղմամբով հետազոտություններում:

Հովհաննես կայսեր արշավանքի երթուղին Միքայել Իտալիկոսի «Ներբողյանում» ավելի հստակ է արված, պատմական փաստերը՝ հարուստ: Այն գրված է, ինչպես բնորոշ է նման ժանրի երկերին, վերամբարձ, ճոռոմ ոճով, առատորեն օգտագործված են անտիկ և վաղ միջնադարի հույն բանաստեղծների ու գրողների աշխատություններից դարձվածքներ ու ոճեր: Հոմերոս, Խալսիոն, Հերոդոտոս, Պլատոն, Արիստոտել, Պինդարոս, Դեմոսթենես, Պլուտարքոս, Արիստոս, Պրոկոպիոս Կեսարացի, Սուրբ Դիրք, ահա ոչ լրիվ ցուցակը այն աղբյուրների, որոնցից նա յայնորեն օգտվել է: «Ներբողյանի» հրատարակիչը մեղմաբան ու մանրակրկիտ աշխատանքով մեկ աս մեկ մասնացույց է արել այդ բաների, դարձվածքների տեղերը:

Կանգ են առնում Միքայել Իտալիկոսի երկի՝ Հովհաննես Կոմնենոսի կիլիկյան արշավանքին վերաբերող հատվածների վրա: Դիմելով կայսեր, Միքայել Իտալիկոսը գրում է. «Իսկ դու, ով թագավոր, Պամփուլիայի Տեմպեի վրայով, որտեղով անցյալում Պարսկաստանի վրա արշավեց Ալեքսանդր [Մակեդոնացին], կիլիկեցիների վրա ձիավարեցիր, ինչպես բարձրից սափառնող արծիվ, լեռնագագաթներով Կիլիկյան Տավրոսն էիր շրջում սրենթաց, տեղի բարբարոսների վրա հայելով ինչպես եղնիկների ու նապաստակների: Այնտեղ դու վրա հասար արքայիկ Լևոնին, այդպես եմ ես անվանում նրա թագավորությունը, քանզի դու ես իրքը իմի և արքայիկ [օձի] վրա կոխեցիր, տրորեցիր առյուծին և ապստամբած բոլոր վիշապներին»:

Նախքան շարունակելը անհրաժեշտ է վերոբերյալ հատվածի մասին տալ մի քանի բացատրություն: Միքայել Իտալիկոսը Լևոնին արհամարհաբար անվանում է արքայիկ՝ βασιλικός, և քանի որ հուներենում βασιλικός-ը նաև օձի մի տեսակ է, որ հայերը ես անվանում են «արքայիկ», բառախաղ անելով Լևոնին արքայիկ օձ է համարում, բայց նրա իշխանությունը համեմայն ղեկս անվանում է βασιλεία (թագավորություն): Այնուհետև, քանի որ Լևոն անունը հուներեն βασι (լեոն) բառն է, որ առյուծ է նշանակում, ապա ելնելով այս բոլորից կարող ենք ասել, որ հեղինակը մեծ վարպետությամբ օգտագործում է 90-րդ սաղմոսը (§ 13), որտեղ գրված է. «Επεταύρωται βασιλικός εις λείοντα καὶ οὐραίου κύνος» (Եի վերայ իմից և քարից գնասցես դու, առ ոտն կոխեսցես զառեւծն և զվիշապն): Սաղմոսների հայերեն թարգմանիչը «բարձր» է թարգմանել հուներենի βασιλικός-ը:

Միքայել Իտալիկոսը շարունակում է. «Դու այդպես վարվեցիր, իսկ համբավը [Կոստանդնուպոլիս] հասավ թուլուններից արագ, որից հետո այդ մասին տեղեկացրեց կայսերական նամակը: Այդ լուրի վրա ամեն ինչ իրար անցավ, հորդեց մարդկանց պերճախոսությունը, հոսեցին բազմությունները, մարդկանց հոգիները զմայլված էին, օդը թնդում էր ուռաներով: Եվ մենք ամենքս հոգով հրճվում էինք՝ և՛ լսողներս, և՛ պատմողներս: Այդպես, ինչպես դու ղեկավարում ես հնազանդեցնում բարբարոսներին, զարմանալի [գործերովդ] գերում քո հպատակներին»:

Այս պարբերության արժեքն այն է, որ խոսք է լինում Հովհաննես Կոմնենոսի՝ Կոստանդնուպոլիս ուղարկած նամակի (կամ նամակների) մասին, որոնցով նա տեղեկացնում էր Կիլի-

IV, 1952, pp. 5—28—Oriente e Occidente nell' Alto Medioevo. Padova, 1968, pp. 339—367.

⁵ Մ ա ա թ ե ո ս Ու ռ հ ա յ և ջ ի. Ժամանակագրություն. Վաղարշապատ, 1898, էջ 369:

⁶ Ioannes Cinnamus. Epitome rerum ab Ioanne et Alexio Comnenis gestarum. Bonnæ, 1836, pp. 16—21: Nicetae Choniatae Historia, rec. I. A. Van Dieten. Berolini et Novi Eboraci, 1975, pp. 21—31.

⁷ Հմմտ. Նոր բառգիրք հայկազեան լեզուի. հ. Ա, էջ 385. «Արքայիկ օձ. որ և օձաբայիկ. և արքայօձիկ, վասիլիսկոյ, բասիլիսկոս. βασιλικός. basiliscus serpens, քարը, օձ մեծ, վիշապ, թագաւոր իմ՝ արքայիկ օձն է»:

կիսյում և Ասորիքում իր ձեռք բերած հաջողությունների մասին: Այս փաստը կարևոր է և այն իմաստով, որ վկայում է Միքայել Իտալիկոսի «Ներբողյանի» աղբյուրների արժանահավատությունը:

Միքայել Իտալիկոսի «Ներբողյանի» ամենակարևոր հատվածը հաջորդն է, որի վրա ենք հրավիրում ընթերցողների ուշադրությունը: Ճառախոսը, դիմելով հայոց Լեոն I իշխանին, ասում է. «Արդ, ի՞նչ կուլնմ քեզ, ո՞վ բարրաբոս հայ, որ ճիշտ լինի: Ո՞վ Դիոսկորոսի հետևորդ և Սեփրոսի ուղեկից: Դո՞ւ թագավոր, քե՞զ դիադեման, քե՞զ սանդալները: Մի՞թե չէիր հասկանում, որ այդպես վարվելով քո վրա ես հրավիրում կայսեր շանթերը: Քո ամբարտապանությունը ավելի մեծ է, քան Իբսիոնինը, գործածող լպիրշությունը՝ ավելի մեծ, քան Տանտալոսինը, ո՞վ դու, իսկական Սալմոնեոս»:

Միքայել Իտալիկոսը այս հատվածում նախ և առաջ հարձակվում է հայոց դավանանքի վրա, միաբնակության, հայերին համարում աղանդապետներ Դիոսկորոսի և Սեփրոսի վարդապետությունների հետևորդներ: Բայց կարևորը դա չէ: Կարևորը հիշատակությունն է այն մասին, որ Լեոն I-ը իրեն թագավոր է հռչակել, թագ կապել ու կարմիր կոշիկներ հագել, մի բան, որ զբոսընդ էր բյուզանդական արքունիքի բուռն զայրույթը, քանզի այդ քայլը հավասարազոր էր Կիրիլիայի անկախ պետության հռչակման, անգամ բյուզանդական de iure կախումից Կիրիլիայի աղաքավելուն: Մենք բառացի բերեցինք Միքայել Իտալիկոսի խոսքերը. «Դո՞ւ թագավոր, քե՞զ դիադեման, քե՞զ սանդալները», որոնց իմաստն է. «Դու ի՞նչ թագավոր, դու արժանի՞ր ես դիադեմա կրելու, թագավորական կարմիր կոշիկներ հագնելու»: Այս փաստը վկայում է, որ Լեոն իշխանը իրոք իրեն Կիրիլիայի հայոց թագավոր էր հռչակել: Դա հաստատվում է Միքայել Իտալիկոսի «Ներբողյանի» մի այլ հատվածից ևս: Լեոն I-ը, Անավարդայում պարտություն կրելով, փախուստի էր դիմել: Ելզ մասին, հարկավ, Հովհաննես Կոմնենոսը գրել էր Կոստանդնուպոլիս ուղարկած իր զեկուցագրում: Ահա այս փախուստի առթիվ հեռորդը, դիմելով Լեոնին, ասում է. «Բայց դու թիկունքդ շրջելով, ո՞ր ես փախում ապստամբ ու բռնակալ, սուտաճում քաղավոր» (Ψευδολογῶν πασιλευς):

Ինչպես վերևում տեսանք, Միքայել Իտալիկոսը Լեոն I-ի հագած թագը կոչում է «դիադեմա»: Իրականում դա գլխին դրվող թագ չէր, այլ ժապավենը, ապարոշը (վարսակալը), որ փախաթվում էր Աթենքյան թագավորների թագի՝ տիարայի շուրջը: Նույնը օգտագործում էին նաև հայոց Արտաշիսյան և Արշակունի արքաները: Հոռմենական կայսրերից առաջինը դիադեմա կապեց Դիոկղետիանոսը, իսկ որպես բացարձակ միապետության նշանակ այն հաստատվեց Կոստանդին Մեծի կողմից: Կ դարձին դիադեման, կազմելով ամբողջ շրջանակ, դարձավ թուգ: Հուստինիանոսից սկսած դիադեման ստանում է մետաղյա պսակի ձև, որ աստիճանաբար վերածվեց թագի, իսկ դիադեմա և ստեմմա (թագ) բառերը դարձան հոմանիշ՝ հասկացություններ:

Բայց Լեոն I-ի դիադեման հավասարազոր էր ստեմմային, այսինքն բյուզանդական կայսրերի թագին: Հավանաբար ոչ Այզ եզրակացությունն ենք գալիս նույն Միքայել Իտալիկոսի «Ներբողյանից»: Պատմելով իր հիշյալ արշավանքի ժամանակ Հովհաննես Կոմնենոսի կողմից պարտության մատնված Երուսաղեմի լատին թագավորի (Ֆուլկոն) մասին, հարտասանն ասում է. «Էլիայի (իմա՝ Երուսաղեմի—Հ. Բ.) [թագավորը], ցած գցելով պղնձաբերան նիզակը, երկրպագում է քո նիզակի ծայրը և գլխից հանելով պսակը, այն քեզ է ընձեռում, խնդրելով իրեն խոչնդել միայն դիադեման և «թագավոր» հորջորջումը»: Այսպիսով և՛ թագ կրողը, և՛ դիադեմա կրողը թագավոր է, բայց նա հավասար չէ բյուզանդական կայսեր, որի գլխին ոչ թե դիադեմա է, այլ ստեմմա (թագ):

Նրանից կարելի է հանգել մի եզրակացության ևս: Լեոն I-ը շատ հեռատեսորեն գլխին քաղ շղթեց, այլ դիադեմա կապեց, այսինքն իրեն թագավոր հռչակելով՝ բյուզանդական կայսերը հավասարը չհամարեց, գիտենալով, որ դա շափից դուրս հանդգնություն կլինի և բյուզանդական կայսեր զայրույթը բորբոքելու առիթ կտար, թեև, ինչպես տեսանք, կայսրը չհանդուրժեց, որ Լեոնը դիադեմա անգամ կապի, մի բան, որ թուլատրեց Երուսաղեմի թագավորին: Ինչ վերաբերում է «սանդալներին», ապա դրանք կարմիր կոշիկներ էին, որ իրավունք ունեն հագնելու միայն թագավորը:

Արդ, այդ քայլին դիմելով, Լեոնը պետք է դրան իրավական հիմնավորում տար: Նու նոր դինաստիա էր հաստատում, թե՛ վերականգնում արդեն գոյություն ունեցած հայկական հուրբստությունը: Հայկական աղբյուրները Թուրքիայանների Բագրատունի կամ Արծրունի էին համարում, և դա, հավանաբար, Թուրքիայաններից էր գալիս, որոնք այդ ձևով ջանում էին հայերի մեջ բարձրացնել իրենց վարկը, հաստատել իրենց հիմնած իշխանության օրինականու-

Իրենց քալին իրավական հիմք տալու Բայց Լեոն I-ը չէր կարող սահմանափակվել միայն Կիլիկիայում, նա պետք է դուրս գար միջազգային ասպարեզ, իսկ Կիլիկիայից դուրս, Բյուզանդիայում է Արևմուտքում չգիտեին Բագրատունի և Արծրունի հարստությունները, չէին հասնում այդպիսի հարստությունների գոյությունը։ Բյուզանդական և ոչ մի աղբյուրում որպես դիվանատիա չեն հիշվում ոչ Բագրատունիները, ոչ Արծրունիները, թեև նրանց վեհապետները Բյուզանդիայում բաշտանոթ լին որպես իշխանաց իշխաններ։ Լեոն I-ը այդ բանը շատ լավ էր գիտակցում է։ Նման քայլի դիմելիս պետք է ավելի ամուր հիմք նախապատրաստել։ Եվ նա դա արեց իրեն Արշակունի հռչակելով։ Բանդի միջազգային առումով հայտնի էր հայկական այդ հարստությունը։ Իսկ հաստատվում է դարձյալ Միքայել Խտալիկոսի «Ներբողյանով»։ Հոնորը շատ լավ գիտակցում էր, որ Հովհաննես Կոմնենոսի հղորդությունն ու «հերոսությունը» ընդգծելու, իր կուրորդ վեհացնելու համար, պետք է բարձրացնի և նրա հակառակորդին, նրա դեմ կայսեր տարած հաղթանակը է՛լ ավելի մեծացնելու, ընդգծելու համար։ «Արշակունիների տոհմը,— գրում է նա,— հղորդություն է, ամեն մի ցեղից ավելի անհատ, նրանց զորքը՝ մարտական, որ բաղմիջս ընդդիմակայեց պարսիկներին ու հոմալեցիներին, Պոմպեոսին կատարյալ երթանման դուրս հասցրեց։ Բայց հակառակ դրան թո նիզակից նրա՛նք խայտառակ պարտություն կրեցին»։

Ուրեմն «նրանք» Հովհաննես կայսրից պարտվեցին։ Պարզ չէ՞ ովքեր են «նրանք»։ Արշակունի Ռուսիսյանները։ Մի թիվ հետո Միքայել Խտալիկոսը, նկարագրելով Անավարդայի պաշարումը բյուզանդացիների կողմից, ցույց է տալիս, որ կայսրը, դիմելով պաշարված հայերին, գոյում էր. «Են Պոմպեոսը շեմ, ով [Լեոն] Ռուսիսյանի⁹ բարբարոս ստրուկներ, ոչ էլ ձեռք երկու կողմում գտնվող կելտն¹⁰ ու Իսմայիլը¹¹, այլ Կոմնենոս կայսրը, թագավորական ծիրանիի ամենահարաշալի մարմնավորումը»։ Միքայել Խտալիկոսը Պոմպեոսին այստեղ հիշում է, քանզի նա էր իսկապես Արշակունիների¹² դեմ պայքարողը։

Այսպիսով միանկամայն պարզ է, որ Լեոն իշխանը իրեն հռչակել էր թագավոր հայոց, իր նրկիրը՝ թագավորություն, վերականգնացած Արշակունյաց թագավորություն, կապել թագ և հռչակել թագավորական կարմիր կոշիկներ։ Սա էլ ահա, Միքայել Խտալիկոսի խոսքերով, պատճառ դարձավ, որ Լեոնի վրա թափվեն կայսեր շանթերը։

Լեոն I-ը իշխեց 1129-ից մինչև 1137 թ.։ Թե երբ նա իրեն հայոց թագավոր հռչակեց, դժվար է ասել։ Վերևում ասվածից մի հարց էլ է ծագում։ Լեոն I-ին հաջորդած իշխանները մինչև XII դարի վերջը, երբ Կիլիկիան անկախ թաղավորություն ճանաչվեց միջազգային առումով և հայոց իշխան Ռուսիսյան Լեոն II-ին թագավորական թագ ուղարկեցին և բյուզանդական արքունիքը, և՛ հոմեական արքունիքը, հայոց իշխանները փորձ արեցին կրկնելու Լեոն I-ի քայլը։ Հավանաբար ոչ, ոչ միայն այն պատճառով, որ իրենց այնքան հզոր չէին դուրս գալ, չէին ունենում առիթ տալ բյուզանդական պետության մի նոր արշավանքի դեպի Կիլիկիա։ Նրանք անդամ ձերբադատվելով բյուզանդական de facto կախումից, շարունակում էին de jure ճանաչել նայսրության վերականգնությունը։ Լեոն I-ի որդի Ռոդոսը, երբ իր հոր հետ Կոստանդնուպոլիս

⁹ Ինչպես վերևում տեսանք, առաջին անգամ իրեն Արշակունի էր հռչակել Վասիլ I-ը։ Բայց նա միակը չէր։ Անգամ Դանիշմանյան ամիրաները փորձեցին իրենց Արշակունի ծագում վերագրել։ Մեկը Դանիշմանյան, նիկեոսա հոնիատոսի ասելով, «սերում էր Արշակունիների» (Γεωργ. εἰς τὸν «Ἀρχιεπισκοπ. συνταξ. εὐφροσύνης. Νικ. Chon. Historia, p. 34)։ Ինչպես հայտնի է, երբ Լեոն I-ը փորձեց գրավել Կարկառ բերդը, նրան զինական օգնություն ցույց տվեցին Դանիշմանյանները։ «Արշակունի» Լեոն I-ի դաշինքը «Արշակունի» Դանիշմանյանների հետ, ընդդեմ Բյուզանդիայի, չէր հիմնավորվում արդյոք նաև երկու պետությունների զինատեսական «ազգականությունը»։ Նրանց կարելի է ավելացնել և Ալեքսիոս Կոմնենոսի զորավար Ասպիետին, որ Աննա Կոմնենեի ասելով Արշակունիներից էր սերում (Anne Comnene. Alexiade t. III, p. 55)։ Այս բոլորը վկայում են, որ Բյուզանդիայում հայտնի էր միայն Արշակունիների հարստությունը, և որ Լեոն I-ի քայլը պատահական չէր։

¹⁰ Տե՛ս ստորև, ծան. 31։

¹¹ Անտիոքի իշխանությունը։

¹² Դանիշմանյանները։

¹³ Տիգրան II-ը իրականում Արշակունի չէր, այլ Արտաշիսյան, բայց աղբյուրներում, այդ թվում և հայկական, սխալմամբ նրան Արշակունի են համարում։ Այդպես և բազում ուսումնասիրություններում։

գների տարվելուց մի քանի տարի անց կարողացավ, փախուստի դիմելով, Կիլիկիա գալ և վերա-
հանգնել չայոց պետականությունը, իրեն համարում էր բյուզանդական կայսեր վասալը-
«ճորտ եմ թագաւորին»¹³, ասում էր նա, այսինքն հավաստիացնում էր կայսերը, թե նպատակ
չունի կրկնելու իր հոր՝ Լևոն I-ի քայլը:

Այսպիսով տեսնում ենք, որ Հովհաննես Կոմնենոսի արշավանքը Կիլիկիա նպատակ ունե-
ր թիվս այլոց, հենց խանձարուրում խեղդիլ հայկական անկախ թագավորությունը: Եթե պարտված
խալկիդոնների, արարենների և խուրքների նկատմամբ բյուզանդական կայսրը իր «մեծահոգութիւ-
նը», «մեծասրտութիւնը» ցուցաբերեց, չայոց իշխանի հանդեպ եղավ ծայրաստիճան դաժան:
Այլ էր պահանջում բյուզանդական արքունիքի դիվանագիտությունը:

Ընթերցողի մոտ թող չստեղծվի այն թյուր կարծիքը, թե մենք Կիլիկյան Հայաստանի թա-
գավորության շրջանը փորձում ենք 60 տարով հտ բերել: Ոչ, Լևոն I-ի քայլը սոսկ փորձ էր, մի-
անհաջող փորձ, ռայց այդուհանդերձ, Լևոն I-ին կարող ենք համարել Կիլիկիայի չայոց առաջին
բաղակապը: Միքայել Իտալիկոսի «Ներբողյանը» մեզ տալիս է այդ իրավունքը:

Վերջապես այստեղ նշենք, որ Միքայել Իտալիկոսը թեև հիշատակում է Անավարդյուն
Լևոն I-ի ընտանիքի գերվելը, սակայն չայոց իշխանի բռնվելու մասին չի խոսում: Նրա երկում
չկա և Վահկա բերդի անունը, բերդ, որտեղ ապաստանեց և ըստ այլ աղբյուրների՝ գերվեց չա-
յոց իշխանը:

* * *

Միքայել Իտալիկոսի «Ներբողյանում» կա շատ արժեքավոր պատմական նյութ Հովհաննես
Կոմնենոսի 1136—1138 թթ. պատերազմական գործողությունների մասին ինչպես Կիլիկիայում,
այնպես և Ասորիքում: Ինչպես բոլոր նման ոճի գործերում, հատկապես բյուզանդական հեղինակ-
ների, առատ են ձողում քաջությունները, իր հերոսին վեհացնելու անսահման ձգտումն ու տեն-
չը: Ճառախոսը դիմում է ճարտասանական արվեստի բոլոր հայտնի ձևերին, օգտագործում է
մեծապես սկսած բազմաթիվ հեղինակների խոսքերն ու դարձվածքները: Ֆ. Ֆուսկոն մեկ առ մեկ
հայտնաբերել և ցույց է տվել Միքայել Իտալիկոսի նման դարձվածքների աղբյուրները: «Ներ-
բողյանի» բնագիրը, ելնելով բովանդակությունից, հրատարակելը բաժանել է քսան հատվածների,
որոնցից մի քանիսում միայն կա պատմական հետաքրքրություն ներկայացնող նյութ: Ահա այդ
նյութն էլ մենք ուտորև թարգմանաբար բերում ենք՝ Կիլիկիայի հայկական պետության պատ-
մությանը զբաղվողներին մի նոր հետաքրքիր աղբյուրի հետ ծանոթացնելու համար: Եթե հու-
նարենք բնագիրը հրատարակել Ֆ. Ֆուսկոն պարտավոր էր ցույց տալ Միքայել Իտալիկոսի
այս կամ այն բանի, դարձվածքների հունական աղբյուրը, ապա հայերեն թարգմանության մեջ
այդ բոլոր աղբյուրները մեկ առ մեկ ցույց տալն իմաստ չունի: Մենք ցույց կտանք հիմնակա-
նում Աստվածաշնչից կատարած նրա մեջբերումները, քանի որ դրանք բերելու ենք V դարի
գրաբար թարգմանությունից: Ասենք նաև, որ Միքայել Իտալիկոսի՝ հին հունական դիցա-
բանությանը դիմելը և Լևոն իշխանին այդ դիցաբանության առանձին բացասական կերպարների
հետ նմանեցնելը շատ դիպուկ է՝ հարկավ, բյուզանդացի հոեոորի տեսանկյունից:

Պատմ. գիտ. դոկտոր Հ. Մ. ԲԱՐԹԻԿՅԱՆ

EIUSDEM ITALICI ORATIO REGIA IN IOANNEM COMNENUM IMPERATOREM PORPHYROGENITUM E SYRIA DEBELLATA REDEUNTEM

ՆՈՒՅՆ ԻՏԱԼԻԿՈՍԻ ՃԱՌ ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ՝ ԾԻՐԱՆԱԾԻՆ ԿԱՅՍՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՈՄՆԵՆՈՍԻ
ԱՍՈՐԻՔԻՅ ՀԱՂԹԱԿԱՆ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԱՌԹՎ

«Ե. Իսկ դու, ո՛վ թագավոր, Պամփուլիայի Տեմպեի՝ վրայով, որտեղով
անցյալում Պարսկաստանի վրա արշավեց Ալեքսանդր Մակեդոնացին, կի-
լիկեցիների վրա ձիավարեցիր, ինչպես բարձրից սավառնող արծիվ, լեռնագա-

¹³ Մատթեոս Ուռհայեցի, էջ 400:

¹ Պամփուլիան Փոքր Ասիայի ծովափնյա դաշտավայր է, Տավրոսի հարավային ստորոտին՝
չուլիկիայի և Կիլիկիայի միջև: Գլխավոր քաղաքներից էր Ատտալիան:

գաթներով Կիրիկյան Տավրոսն էիր իջնում սըրնթաց, տեղի բարբարոսների վրա հայելով ինչպես եղնիկների ու նապաստակների: Այնտեղ դու վրա հասար արքայիկ Լեոնին, այդպես եմ ես անվանում նրա թագավորությունը, քսնզի դու ես իրոք իժի և արքայիկ [օձի] վրա կոխեցիր, տրորեցիր առյուծին և ապստամբած բոլոր վիշապներին: Դու այդպես վարվեցիր, իսկ համբավը [Կոստանդնուպոլիս] հասավ թռչուններից արագ, որից հետո այդ մասին ազդարարեց կայսերական նամակը: Այդ [լուրի] վրա ամեն ինչ իրար անցավ, հորդեց մարդկանց պերճախոսությունը, հոսեցին բազմությունները, մարդկանց հոգիները զմայլած էին, օղբ թնդում էր ուռաններով: Եվ մենք ամենքս հոգով հրճվում էինք՝ և՛ լսողներս, և՛ պատմողներս: Այդպես, ինչպես դու զենքով ես հնադանյեցնում բարբարոսներին, դարձանալի [գործերով] գերում քո հպատակներին:

Արդ, ի՞նչ կոչեմ քեզ, ով բարբարոս հայ², որ ճիշտ լինի: Ո՛վ Դիոսկորոսի³ հետևորդ և Սևերոսի⁴ ուղեկից: Դո՛ւ թագավորու՞թյուն քե՞զ դիտողեման, քե՞զ սանդախները: Մի՞թե չէիր հասկանում, որ այդպես վարվելով քո վրա ես հրապարակապես շանթերը: Քո ամբարտաճանությունը ավելի մեծ է, քան Իբսիոնի⁵, գործածող պիղծությունը՝ ավելի մեծ, քան Տանտալոսի⁶նը, ո՛վ դու իսկական Սալմոնեա՛:

Բայց նախքան այս բռնատիրոջների և ապստամբների վրա արշավելը, քո դորքի համար ճանապարհ էիր հարթում: Լեոներ էին բռնում, ըստ մարգարեի խոսքի. «ամենայն լերինք և բլուրք խոնառհեցին. և եղիցին ամենայն դժուարինք ի դիրինս, և առապաքեն ի դաշտա»⁸: Դու նրանց դեմ արշավելիս նավերը լեոների վրայով չէիր ուղարկում, ոչ էլ ծովով՝ հեծելազորը, կամենալով Աթոսով նավառկել և Հելլեսպոնտոսով ձիավարել, ճանապարհին անծանոթ լինելով, ինչպես պարսիկները վարվեցին, գործելով ընդդեմ [բնություն] աւորների: Դու ասածու հրեշտակը լինելով և նրա կողմից առաջնորդվելով, դու էիր դորքի առջևից դնում և պատրաստում ճանապարհը ընդդեմ թշնամիների: [Բարբարոսները] նախ մի բանում են համոզվում, որ իդուր են իրենց հուսար լեռնագագաթների հետ կապում, քանզի դու, դրանք էլ ես գրոհով վերցնում, լրելով բոլոր Տեմպենները, բարձր լեռները դաշտերին հավասարեցնելով: Դու սեղաշարժեցիր: Բարբարոսներին ու լեռները, ապացուցեցիր, որ քո աջը ավելի

2 Նկատի ունի Լեոն իշխանին:

3 Ալեքսանդրիայի միաբնակ պատրիարք (444—451): Քաղկեդոնի 4-րդ տիեզերական ժողովում կորդալուծ արվեց և արքայից Պափիազոնիա, ուր և վախճանվեց 454 թ.:

4 Անտիոքի միաբնակ պատրիարք (512—518): Քաղկեդոնի 4-րդ տիեզերական ժողովի որոշումների հակառակորդ: Սիլվեի եկեղեցական ժողովում նզովեց Քաղկեդոնի ժողովի որոշումները: Իր հետևորդները կոչվեցին Սևերիանոսներ: 535 թ. կանչվեց Կոստանդնուպոլիս, դատապարտվեց և արքայից նզվապոս, որտեղ և վախճանվեց (538 թ.):

5 Իբսիոնը, ըստ հունական դիցաբանության, Ջևսից ստանալով մեծ հարստություն, ամբարտաճանացավ, շահասիրությամբ զրգված՝ սպանեց իր աներոջը, որով համարվում է տոաջին մարդասպանը: Նրբ մոլեղնեց, Ջևսը նրան ներեց և Օլիմպոս տարավ: Այստեղ Իբսիոնը սկսեց արքայից, որի համար դատապարտվեց բոցերի վրա պատվող անիվին կապվելու:

6 Փոյուգիայի առասպելական թագավոր: Լինելով Օլիմպոսի աստվածների սիրելին, ուղեց փորձել նրանց և սպանելով իր որդի Պելոպսին, նրանից ճաշ պատրաստեց և հյուրասիրեց աստվածներին: Խաբույթով բացվեց, աստվածները Պելոպսին կենդանացրին, իսկ Տանտալոսին շանթահար անելով, դատապարտեցին անըրշիրմյան ուշիարհում ապրելու անվերջ քաղցի ու ծարավի մեջ:

7 Առասպելական թագավոր Սալմոնեսը քամիների աստված էոլոսի և Սիդիփոսի քույր Լնարեոսի որդին էր: Լինելով կոպիտ ու ամբարտաճան, իրեն ներկայացնում էր որպես Ջես՝ հասեր արձակելով հավատացնում էր, թե Ջեսի շանթերն է նետում: Ջևսը զայրացած նրան շանթահար արեց:

8 Ծագյի, Խ, 4:

9 Ակնարկում է պարսից արքա Քսերքսեսին: Տե՛ս Հերոդոտոս, է, 22 և հտ., 33 և հտ.:

հզոր է լեռների ընձեռած ապահովությունից: Լեռները ամուր նստած են, բայց քո կամքը նրանցից էլ հզոր է: Աստված կարող է երկրաշարժով երկիրը սասանել, իսկ թագավորը հնարքներով է այն տեղաշարժում...

5. Այնտեղից դու արշավեցիր կոռիկոսցի Տյուփոնների¹⁰ վրա, որոնց շահ-թահար արեցիր քո նետերով, նրանց գլխին քարերի տարափ թափեցիր, ո՞վ թագավոր, և ոչնչացրիր: Ո՞վ կարող է պատմել քո՝ այնտեղ վարած մարտերի մասին, ո՞ր մուսան, ո՞ր Հոմեթոսը: Ո՞վ կարող է պատմել Համոս¹¹ գետի մոտ քո հանած հեծյալ զնդերի մասին, Ասկոռայում¹² արձակածդ դիպուկ նետերի, այնտեղ գերի բռնածներդ, Կիլիկիայում ձեռք բերածդ առաջին ափսոսի ու կապուտի մասին:

Այնտեղից դու ամեն ինչ սասանող ու ցնցող սարսափելի մորիկի նման անցար դեպի Կիդնոս¹³, բարբարոսներին քշելով ինչպես նավերը՝ փորձանքների հորձանուտը: Ո՞վ չի ապշի այնտեղ¹⁴ զործածող սխրանքների վրա, որոնցով ի սկզբանե անտի հոմայեցիներին պատկանող և անցյալում խրանդից չհափշտակված քաղաքները ազատագրեցիր: Կարծես դու ինչ-որ աստված էիր, որ էկար: Նրանց բազմաձյա գերությունից ազատագրելու: Այդ փրկածները իսկույն պարիսպների ետևում ապաստանեցին և փակեցին քո մուտքը: Բայց դու քո զինվորներով քաղաքը գրավելու պատերազմական կոչով¹⁵, քո զինվորներին քաջութիւն ու արիություն ներարկեցիր, կարելի է ասել՝ ինչպես Աթենասը Դիոմեդեսին՝ և կամ Ալեքսանդրը Մարականդայում¹⁷ մակեդոնացիներին: Նրանք իսկույն, կարծես ատամներով, պարիսպներն էին ճարակում: Շարունակությունը թող լրացնի ողբերգակ Հոմեթոսը¹⁸: Նրանք տղամարդկանց են կոտորում, քաղաքը հրո ճարակ դարձնում¹⁹, ինչպես մյուս գրաված քաղաքներում, զրա գլխին էլ փորձանքներ են թափվում: Եթե ողբերգության հիմքում ընկած են ողբն ու հրաշքը, ինչպես ասում են խոսքի վաղապետները, ապա ալստեո բարբարոսների համար ողբը փորձանքն է, իսկ ամենամարդասիրական հրաշքը՝ կայսեր կռուկցանքը դեպի անհաշտ թշնամիները:

Մրանց համար [փրկության] վերջին խառիսխը միջնաբերդն էր, բայց

¹⁰ Նկատի ունի Կոռիկոս նավահանգիստը: Տյուփոնը Զևսի դեմ մարտած հրեշ էր, որ պարտվելով, ըստ Հոմերոսի, «Արիմների երկրում» ընկած մնաց: Հետագա շրջանի անտիկ հեղինակները այդ երկիրը համարում են Կիլիկիան: Էսքիլոսն օրինակ, Զևսի և Տյուփոնի կռիվը տեղադրում է Կիլիկիայում: Այդպիսով Միքայել Խաչիկոսը մի անգամ ևս Հովհաննես կայսերը Զևսի հետ է համեմատում:

¹¹ Համոս գետը հոսում է Սելևկիայի շրջանում: Սկիզբ է առնում Տավրոսից և հոսելով դեպի հարավ և հարավ-արևելք, ձով է թափվում Մերսինից արևմուտք գտնվող նույնանուն քաղաքի մոտ: Թուրքերն այժմ կոչում են Համաս-սու:

¹² Կիլիկիայում Նաթանայելյան տոմին պատկանող բերդ էր: Ըստ Ղ. Ալիշանի՝ «Երզն» ձևակերպության սահմանքն ոչ հնդի ի Հեթմանց» (Սիստուն, էջ 46, նաև՝ 64, 115):

¹³ Գետ Կիլիկիայում, այժմ Տարսուս սու: Բիտում է Տավրոսում և հոսելով Տարսոն քաղաքով, թափվում Միջերկրական ծով:

¹⁴ Այսինքն՝ Տարսոնում:

¹⁵ «Պատերազմական կոչ» ենք թարգմանում բնագրի *Ενταύταις*-ը: Հունական դիցաբանություն մեջ կար այդ անունով պատերազմի աստվածություն, որ շատ վաղ ժամանակներում նույնացվեց Արեսի հետ և դարձավ նրա ածականը: Քսենոփոնը պատմում է, որ ռազմիկները նախարան ճակատամարտը «աղաղակում էին» (կոչ էին անում) էնիալիոսին, այստեղից էլ հատուկ անունը ստացավ պատերազմական կոչի նշանակություն:

¹⁶ Էտոլիայի թագավոր, Տրոյական պատերազմի մասնակից (Իլիական. Դ, 365 և հտ., է.), որտեղ Աթենաս աստվածուհին նրան արիությամբ ու կորովով լցրեց: Իլիականում Դիոմեդեսը հանդես է գալիս որպես անվերջ մարտնչող, համարձակ հերոս:

¹⁷ Նոգդիանայի մայրաքաղաքը, ժամանակակից Սոմարդանդի տեղում: Ալեքսանդր Մակեդոնացին այն գրավեց 329 թ.՝ Տեոս Արիանոս. Անաբասիս. Դ, 5, 3:

¹⁸ Հմմտ. Հոմերոս. Իլիական Թ, 593:

¹⁹ Նույն տեղում:

ակամա դրանից էլ են զրկվում, նրանց վրա կարծես անսպասելի մորիկ տեղացի՝ քո հարադատ որդին՝ մեր թագավորը²⁰, որ նրանց դեմ կանգնեցրեց ավերիչ բարանը: Ո՛վ թագավորը²¹, դու բարբարոսների դեմ որպես ահարկու գրոհի նրան ուղարկեցիր: Նրան դաստիարակողը ինչ-որ պարծենկոտ հիպպոկենտավորոս²² չէր, որից ձիավարություն ու գիտելիքներ սովորեց, առաքինությունը որդին հորից ի բնե ժառանգեց: Ո՛վ անհաղթելիներ ու անպարտելիներ: Ասում են, որ Հերակլեսն անդամ ի վիճակի չէ երկուսի դեմ կռվել: Եթե համալն Ասիան չկարողացավ դիմանալ մեկ կայսեր, նրանք ի՞նչ կարող են անել, երբ Հերակլեսին օգնության է հասնում և Իռլանդիայում²³, Բագմազլուխ ո՞ր հիդրաները կարող են ձեռք դիմանալ: Դո՛ւ, ո՛վ կայսր, ինքդ պիտի կտրես Բիդրայի գլուխները, իսկ դո՛ւ, ո՛վ թագավոր, պիտի այրես կտրված տեղերը, և այդպիսով կհաղթահարվի ամբողջ հրեշը: Տարսոնն այլևս թող Տարսոն չկոչվի՝ այնտեղ խոսեցին ինչ-որ Պեգասոսի²⁴ սմբակից, ոչ էլ Պերսեսի²⁵ այնտեղ սայթաքած որդի Տարսոսից, Կլիկիան էլ՝ Կլիկիսից²⁶: Ո՛վ թագավորներ, այդ վայրերը ձեր անուններով կոչեք, քանզի այդտեղ ձեր գործած հրաշքները նրանց գործածելուց շատ ավելի մեծ են:

6. Դու այդ կեղծ կիրիկեցիներին սարսափով էիր պատում, կելտերին սահմուկեցնում, Տարսոսը պոսվում, Ադանա ներխուժում, Մոպսուեստիան յլնքով առնում: Այդ առթիվ մենք ծափահարում ենք, չենք լուում, (երգվում ևս հանուն քո՝ Կիրիսոսում տված մարտերի, Սարսոսում²⁷ բարբարոսներին գերեզմարելու իրողության), այլ լալնաբերան ներբողում ենք, պատմում այնտեղի կելտերի գլխին բեռածդ փորձանքների մասին: Այնուհետև Կիրիկիայի այդ քաղաքներից գնացիր Կիրիկիայի այլ քաղաքների վրա, կելտ բարբարոսներից՝ հայ բարբարոսների վրա, Տարսոսից՝ Անավարդա, լալնաբեռնալ դաշտերից՝ լեռները, որ ոտքով հնարավոր չէ անցնել...

7. Իսկ ես, ինձ համակած դայրույթի աղղեցություններ, շեղվեցի խոսքից: Այժմ վերադառնում եմ սկսածս պատմության շարադրանքին: Արշակունիների ասհմը ամենահորատագույնն է, ամեն մի ցեղից ավելի անհաշտ, նրանց գործը՝ մարտական, որ բաղմիցս ընդդիմակայեց պարսիկներին ու հռոմայեցիներին, Պոնտոսին կատարյալ կործանման դուռը հասցրեց: Բայց հակառակ դրան, քո նիզակից նրանք խայտառակ պարտություն կրեցին: Ամեն ինչից հուլանքը կտրած, նրանք²⁸ որոշեցին դիմել կրակին, սկսեցին քո բաբանները հարվա-

20 Հովհաննես Կոմնենոսի որդին, որին Միքայել Իսախանի աշնունեան հիշելով, անուղղակիորեն Ալեքսիոս է անվանում: Հովհաննես Կիննամոսը նրան Իսահակ է անվանում: Միքայել Իսախանի թեև Հովհաննես կայսերը բաղմիցս չաշխույժ (թագավոր է կոչում, սակայն, երբ պետք է նրան զանազանի որդուց՝ Ալեքսիոսից, վերջինիս կոչում է «թագավոր», իսկ նրա հորը՝ շաշաշաշա՝ (ինքնակալ, կայսր):

21 Այստեղ խոսքը Հովհաննես Կոմնենոսին է վերաբերում:

22 Ակնարկում է Կրոնոսի որդի կենտավրոս Քիրոնին, Սակեպիոսի, Դիոսկուրիների, Աթլի-լիսի և այլոց դաստիարակին:

23 Հերակլեսի սխրանքներին մասնակցած օգնականը, հատկապես Լեոնեյան ինը գլխանի հիլլայի (վիշապի) սպանության գործում: Հերակլեսը կտրում էր հիլլայի գլուխները, բայց որովհետև կտրված տեղում իսկույն նոր գլուխ էր բուսնում, Իռլանդիայում վառում էր կտրված գլուխի տեղը: Այսպիսով, ըստ բյուզանդացի հեղինակի, Հովհաննես Կոմնենոսը Հերակլեսն է, Իռլանդիայում՝ նրա որդի Ալեքսիոսը, իսկ ինը գլխանի հիլլան, ինքնըստինքյան հասկանալի է, դիմադրող հայերը:

24 Ըստ հունական դիցարանության, թևավոր ձի, որի սմբակի հարվածից աղբյուրներ բխեցին:

25 Զևսի և Դանայեի որդին, գորգոնա Մեդուզայի գլուխը կտրողը:

26 Զևսի կողմից առևանգված Եվրոպայի եղբայրը: Զգտնելով քրոջը, մնաց ալն երկրում, որն իր անունով կոչվեց Կիրիկիա:

27 Մերսինից արևելք հոսող Սիհուն գետը:

28 Անավարդայի հայ պաշտպանները:

ծել յուրատեսակ շանթերով՝ քարերի փոխարեն ջահեր արձակելով: Բայց նրանք իրենց հաշիվների մեջ սխալվեցին՝ քանզի փորձեցին պանտարեհ²⁹ քարի վրա կրակ թափել: Որովհետև դու, [կայսր], իսկույն հանգցրիր նրանց արձակա՝ ջահերը, այն էլ ոչ ջրով, այլ հնարամտությամբ, նրանց հրաձգությամբ «աղյուսե պառիսպ»³⁰ հակագրելով, որպեսզի բարբարոսների կրակը աղյուսները թրծելով, քեզ ծառայած լինի...

Նրբ նրանք տեսան, որ հրաձգությամբ արդյունքի չեն հասնում, իրենք իրենց դեմ դայրացած, դաշնակից հուրը սեփական քաղաքի դեմ են օգտագործում, պարսավում՝ հրո անդորությունը, ասելով. «Ո՛վ անուխտան տարր, միայն կայսեր համար սառը: Քանի որ, [ո՛վ հուր] դու ես նրանից պարտվեցիր, եկ, մե՛զ ցույց տուր քո գործությունը, կրակի ճաքակ դարձրու [քաղաքի] բնակարանները, որպեսզի կայսրն իմանա, որ մեր կրակի դեմ էլ է նա կռվում»: Այդպես ասելով, նրանք քաղաքը կրակի տվեցին և նա իսկույն ամեն կողմից ամբողջությամբ բոցավառվեց:

Այդ հրաշքները դու գործեցիր, ո՛վ թագավոր, քաղաքացիների կրակը քաղաքացիների դեմ շրջելով: Նրանք քաղաքից փութանալի գնում են միջնաբերդը, միաժամանակ դուռնալով պաշարյալներ ու փախստականներ, բայց դու նրանց ալետեղից էլ ես դուրս հանում, վերստին պարտության մատնում նրանց, ովքեր կռակով իսկ չկարողացան գեթ մեկ անգամ հաղթել: Դու նրանց վրա էլ էիր գոչում, ո՛վ թագավոր. «Ես Պոմպեոսը չեմ, ով [Լևոն] Ռուբենյանի»³¹ բարբարոս ստրուկներ, ոչ էլ ձեռ երկու կողմում գտնվող կելտն ու իսմայիլը³², այլ Կոմենենոս կայսրը, թագավորական ծիրանիի ամենահրաշալի մարմնավորումը»:

Բայց դու թիկունքդ շրջելով ո՛ր ես փախչում, ապստամբ ու բռնակալ, սուտանուն թագավոր³³, թեև ճիշտ ես անում, քանզի, ո՛վ ամբարիշտ, ավետարանի բոլոր ասույթներն անգոսնած, հալածական լինելով, նրա մի ասույթը միայն հիշեցիր. «Յոթամ հալածիցեն զձեզ ի քաղաքիս յայսմիկ, փախիցիր յայլ»³⁴: Բայց սուրացող կայսրից չես փախչի³⁵, Լեոնների գազաթնե՞րը պիտի բարձրանաս: Ի՞նչ ես ասում: Եթե թուշուն անգամ դառնաս, նա քեզ կհասնի: [Կայսրը] այսքան ժամանակ ձեռ կողմից հափշտակված քաղաքներն է պահանջում, որոնք դեռ հնուց հոռմայեցիներին հարկատու էին: Ձեր հույսը մի՛ դրե՛ք վայրերի դժվարամատչելիության վրա: Այն վայրերով, որոնք ոտքով դժվար է գնալ, նա ձեռով կգնա: Դու միայն մի բան ես շահում, այն, որ իսկույն չես գերվում, բայց քո ամենասիրելիներն³⁶ արդեն գերվել են, և նախքան քո գերվելը, քո զավակների ավար տարվելով գերվեցիր: Կարծում ես, որ քեզ,

29 Թանկագին քարի տեսակ, հավանաբար սուտակ:

30 Քսենոփոն. Անաբասիս. Գ, 4, 11:

31 Բնագրում՝ Ρουπένιος (սեռ. հոյ.), որ նշանակում է՝ «Ռուբենի» և «Ռուբինյանի»: Ρουπένιος-ը այս շրջանում ստացել էր մականվան նշանակություն: Աննա Կոմենեն, օրինակ, իշխան Կոստանդինի որդիներ Թորոսին և Լևոնին կոչում է Ρουπένιο (Ռուբինյաններ): Տե՛ս Anne Comnène. Alexiade. T. III, p. 134. Պահպանվել են Թորոս Ռուբինյանի կնիքները, որոնց վրա նա հետևյալ մակադրությունը. Ρουπένιος Θεοφωτος (սեռաստ. Թորոս Ռուբինյան): Տե՛ս В. С. Шандровская. К истории армяно-византийских отношений XII в. (по данным сфрагистики).—ЗВУЗ ԳԱ «Արաբեր հաս. գիտ.», 1974, № 4, էջ 37:

32 Անտիոքի լատինները և Դանիշմանյանները:

33 Նկատի ունի Լևոն I-ին:

34 Մատթ., Ժ, 23:

35 Ինչպես վերևում տեսանք, ըստ Գրիգոր Նրեցի Լևոնը գերվեց Անավարդյանում (Մատթ. Եւոս Ուռհայեցի, էջ 369): Բայց «Ներքողյանում» պարզ ցույց է տրված, որ ուլտեղ գերվեց Լևոնի ընտանիքը միայն, իսկ Լևոնը կարողացավ փախուստի դիմել: Նա փախավ Վահագն բերդը և այնտեղ գերվեց: Միջալեւ իտալիկոսը Վահագ բերդի անունը չի տալիս:

36 Նկատի ունի Լևոն I-ի կնոջը և որդիներ Թորոսին և Ռուբենին:

պաշարյալի՝ օգնության կգան Քրիստոսի քարոզիչներին³⁷ բազմաթիվ մասունքներով։ Հույսդ կտո՞րի։ Նրանց հոգիները մեր դաշնակիցներն էին, այժմ մերը եղան և նրանց մասունքները, ոոոնք մեծապես պարտական են կայսերը, քանի որ ամբարիշտների ձեռքից, ինչպես տապանը, փրկվեցին։ Մեկ է, դրանցից հետո, դու էլ ծոծրակդ կխոնարհես, կփափկացնես քո ամենակարծի պարանոցը, և նրան, ոոին չճանաչեցիր որպես լույս, կճանաչես որպես հուր³⁸։

Շ. Իսկ մենք՝ դեմոսը, այդ առթիվ հաղթական երգեր էինք երգում, լուրսբանչություն իր լեզուն թմբուկ էր դարձրել, Մարիամին փառաբանող Մովսեսին նմանվելով³⁹, փառաբանում էինք և՛ քեզ, և՛ աստծուն, կայսերը և ամենակալին⁴⁰, քանզի քո հրաշագործությունները ոչ թե ծովում⁴¹, ով քո՝ մեծիդ հրաշքները, այլ ցամաքում գոռոցների, այժմ դու ես փրկիչն Իսրայելի, կործանողը փարավոնի։ Նրիպարն ու հեծյալը այժմ ոչ թե ծովն են ընկնում⁴², այլ լեռները, անապատներն ու անդունդները⁴³, [Դեմոսն] ապշեց Կյուլե Ասորիքի և նրա շոջանում գտնվող քաղաքների առամբը, դու ինչքան հրաշքներ գործեցիր։ Նփրատի ու Տիգրիսի ափերին, արաբների դեմ... Դու Ասորիքի քաղաքները ավերեցիր...

Դու նրանց քաղաքները գոռոցով էիր վեցնում՝ նրանց վրա խուժելով ինչպես փոփոթիկ, ջարդելով ամեն մի դիմադրություն, ապշեցնելով Ասորիքի և Կիրիկիայի բոլոր բնակիչներին...

Չ. Այնուհետև դու, ահառկու առյուծդ, բարբարոսներին ցուլց տվիր և կորյունին⁴⁴, թե ինչպիսի մագիլներ ունի նա, ուղարկեցիր նրան այլ քաղաքների դեմ։ Եվ նա առանց հապաղման, իսկույն անցավ նրանց պաշարմանը, փութանակի, ասպատակելով, ամայացնելով նա ցուլց տվեց իր անճառելի մեծապործությունները։

Այժմ մենք սկսում ենք պատմել Գաստունե⁴⁵ քաղաքի մասին, այն դրավող ամենաառի թագավորի՝⁴⁶ հռոմայեցիների պետության պաշտպանի⁴⁷, քո ծիլ, կայսերական ծիրանու ծաղկի, քո դպրոցի ամենաթանկագին աշակերտի...

10. Արդեն անցնում ենք անտիոքացիներին, պատմում նրանց նկատմամբ գործված հրաշքների մասին, այդ առթիվ տոնելով գեղեցիկ սիրահարների հետ միասին։ Նրանց անտիոքացի ասելով, ես նկատի ունեմ Ասորիքի կելտերին, քանզի ժամանակի ընթացքում այդ անունն արձատացավ, ինչպես որ ուրիշ կելտերի մենք իրեններ ենք անվանում։ Սրանք անցյալում իրենց հսկա էին կարծում, մատի ծայրերին էին քայլում, սարսափելի ամբարտաճանացել էին, նրանց խելահեղությունն ամպերից վեր էր բարձրացել։ Բայց երբ դու հեղուկություն մի կողմ թողած նրանց համար մրրիկ դարձար, նրանց վրա արձակեցիր։ Հրեղեն շանթերը, պատերազմի արհամիրոքներից կարծես կայծակնահար, լուրաբանչուրը փախուստի դիմեց, մի ծակ ու որջ փնտրեց։ Նրանք, ովքեր պիտի ուժգին եղկներին էին հարվածում և սպառնում նիդակով երկիրը կործա-

37 Նկատի ունի Քրիստոսի առաքյալներին։

38 Նկատի ունի Հովհաննես Կոմենենոսին։

39 Հմմտ. Գիրք ելից, ԺԵ, 20—21. «Եւ առ Մարիամ մարգարէ քուրն Ահարոնի զթմբուկն ի ձեռն իւր, և ելին ամենայն կանայք զհետ նորա թմբկօք և պարուր»։

40 Նկատի ունի աստծուն։

41 Ակնարկում է հրեաների փախուստը Նզիպտոսից և նրանց անցումը Կարմիր ծովով. «Եւ իսրայելացոյց Մովսէս զորդիսն Իսրայէլի ի Կարմիր ծովէ անտի» (Գիրք ելից, ԺԵ, 22)։

42 Տե՛ս Գիրք ելից, ԺԵ, 21. «զերիվարս և զհեծեալս ընկէց ի ծով»։

43 Նկատի ունի Լեոնի փախուստը Անավարդայից դեպի լեռները։

44 Հովհաննես Կոմենենոսի որդուն՝ Ալեքսիոսին։

45 Հիշատակում է Վիլհելմ Տյուրացին։ Ղ. Ալիշանը տեղագրությունն անհայտ է համարում։ Գտնվում էր Անտիոքի մոտ (Սիսուան, էջ 427)։

46 Այստեղ նկատի ունի Հովհաննես կայսեր որդուն՝ Ալեքսիոսին։

47 Միքայել Իսաիկոսը սրամիտ բուռնալ է անում, օգտագործում է հունարեն ἡλιόφιλος (ալեքսիմա) պաշտպան բառը, հուշելով, որ նկատի ունի Ալեքսիոսին, կայսեր որդուն։

նեկ, դենքերին ու նիզակներին բարի ճանապարհ մաղթելով, նիզակների և թրերի փոխարեն խաչի նշանը բարձրացրած, ողորմելի տեսք ընդունած, հղկելի ինչ-որ խոսքեր էին ասում: Բայց ո՞վ կելտեր, սա Հռենոսը չէ, ոչ էլ երկրաշարժ կամ ավեկոծ ծով, որոնց դեմ բարկացած զենք եք կապել և ուզում եք երկրի ու ծովի դեմ նիզակ բարձրացնել, ձեր խելահեղությունը ամեն ինչ տակնուվրա անել ու խոռվել: Ոչ էլ հաբեան Իսմայիլը⁴⁸, որ մեկ հաղթում է, մեկ՝ պարտվում, այլ անպարտելի թագավորը՝ միշտ անհաղթելի զորավար:

Ո՞վ դու, կելտական նիզակը ծանակած: Քո նիզակի հանդեպ բոլորն էլ անդոր են: Ո՞վ դու, համայն Ասիան ապշեցրած, մարդկանց զենքով հաղթահարած, իսկ հեղությունը՝ նրանց հոգիները գերած: Պատվախնդիր լինելով, չսոսափորությունը գերազանցել ես քո նախորդներին, հաջորդներին՝ պայքարելու տեղ չես թողել: Դու Անտիոք քաղաքի վրա շարժվեցիր, կարծես երկու-դեկով, ուր հանկարծ հաղթական պսակը քեզանից հետո զորավարած մեկն ու մեկը կստանա, իսկ դու առանց մրցանակի կմնաս: Դրա համար քեզ հետ պատահեց այն, ինչ Աքիլեասի՝ Հեկտորի դեմ պայքարում: Դու քո ջանասիրտությամբ գուցե և կանխում ես հաջորդներին՝ հանկարծ մի ուրիշը փառքի շարժանանա, դրա համար [Անտիոքն] էլ քո սիրանքների շրջանակի մեջ ես առնում:

Եվ ի՞նչ պատահեց: Զենքով հզորի⁴⁹ հոգին շատ ավելի ողորմելի է, երբ նա ստիպված է պառանոցը խոնարհել: Սա քո աչից ընծա է ստանում իր կյանքը, թեև քո նիզակով նրան մահապատժի ենթարկելու մասին հրաման էիր գրել: Իսկ այնուհետև՝ Մի քանի բառով գծում ես նրանց՝⁵⁰ իշխանության սահմանները. «Յայդ վայր եկեսցես՝ և այլ մի անցանիցես, այլ այդքն է քեզ խորսակեսցին ալիք քո»⁵¹, և ինչպիսին ու էր ասածու հրամանը ծովի վերարելու, այդպիսին էր նրանց համար գիրը թագավորական:

Այնուհետև քեզ հնազանդություն են հայտնում Փյունիկեի իշխանները և հեռվից հաշտություն խնդրում, ապա Եղեսիայի [իշխանը] քեզ դաշնակից է դառնում և ցանկանում նիզակ ճոճել քեզ համար, հետո էլ իրախի⁵² [թաղավորը]⁵³ ցած գցելով պղնձաբեթան նիզակը, երկրպագում է քո նիզակի ծալրը և պլիսից հանելով պսակը, այն քեզ է հանձնում, խնդրելով իրեն թողնել միայն դիակեսան և «թագավոր» հորջորջումը: Երբ արեգակը չկա, աստղերը հնաոգ-վոր է լուսավորում են, բայց երբ նա հոդիզոնից դուրս է դալիս և երկնակամարը լուսավորում, մյուսները թող չփորձեն լուսավորել: Եվ եթե երկնքում կա որևէ հանդուգն աստղ, ու ուզում է արեգակի հետ մրցել, նա ծիծաղելի է դառնում, քանզի նրա լույսը ցերեկը ավելի աղոտ է:

11. Ինչպե՞ս ես չհիանամ, ո՞վ թագավոր, քո անվահերության վրա, դժվարությունների հանդեպ ցուցաբերածդ աներերություն: Դու ինչ չափով բնությունը մարդ ես, նույն չափով մարտերում անպարտելի: Դու, գրավելով այլ-ազգիները՝ քաղաքներ, բազմամբոխ քաղաքներ, հառուստ քաղաքներ, բարեկեցիկ քաղաքներ, ոմանք սուպատակելով գետնին հավասարեցրի՝ թողնելով միայն անունը, իսկ ուրիշների հարստությունն ու դրամը, թշնամիներից քո ծառաները դարձած կելտերին ընծա տվեցիր: Կարծես այդ կերպ փոխհատույց եղար: Նրանցից խլածդ քաղաքների դիմաց ուրիշներից առած քաղաքները տվեցիր, դո՛ւ, ուր է՝ խլող ես, և՛ նվիրող: Դրանով դու ցույց տվեցիր, որ և՛ արդար ես, և՛ առատաձեռն: Անցյալում ուրիշների կողմից հափշտակված ուժով ես խլելը վրիժառու սրի գործն է, սրի, որ դու միշտ փայլեցնում ես ընդդեմ

48 Ամենայն հավանականությամբ՝ Դոնիշմանյանները:

49 Անտիոքի իշխան Ռայմունդը:

50 Անտիոքի խաչակիրներին:

51 Յովր, ԼԼ, 11:

52 Aetia Capitolina. այդպես կոչվեց Երուսաղեմը Հրեական երկրորդ պատերազմից (132—

135 թթ.) հետո, երբ կործանվեց հռոմայեցիների կողմից:

53 Իմա՝ Ֆուկոն:

նրանց, ովքեր ցանկանում են հոռմայեցիների երկիրը պատառ-պատառ անել ու կողոպտել, իսկ նվիրատվությունը պատիվ համարելը վայել է թագավորական աջին: Ամենուրեք տիրանալով նրանց ձեռք բերածին, դու թույլ ես տալիս, որ բավարարվեն թագավորական ձեռքի նվիրածով, բայց ոչ նրանց, ովքեր ընդդիմակալողի բացակայությունից օգտվելով, ինչքան որ կարողացավ իրենց տնտեսությունը, կարծես ցանցով քաղաքներ էին որսում⁵⁴:

Ո՞վ կարող է թվարկել քո գրաված քաղաքները, ո՞վ ամենաքաջարի կասրի, և կամ ո՞վ, հաշվել սկսելով, իսկույն ետ չի կանգնի հենց առաջին համարից, ինչպես նոանք, որոնք փորձում էին հաշվել Իկարիոս ծովի ալիքները⁵⁵: Ի՞նչ հերոսների մեջ, ո՞վ ամենախմաստուն Հոմերոս, ունե՞ս այսպիսի քաղաքավեր թագավոր: Քո Լեքիլեսը կորախել նավերով տասներկու քաղաք գրավեց, իսկ հետևակ՝ մեկով պակաս, մեր պատմածի ամենաշնչին մասը: Բայց [կայսեր] գրաված [քաղաքների] թվից շատ ավելի սպառնացիչը արագությունն էր. այդ քաղաքներից շատերի առումը մի շաբաթ էլ չտևեց: Ո՞վ կարող է պատմել ձեռք բերված ավարի մեծությունն մասին, ուղտերի հոտերի մասին, բաղամբյուր ձիերի, գետի տարված տղամարդկանց և մնացած ամեն ինչի մասին: Նրանցից յուրաքանչյուրը շշմեցնում է ամեն մեկի խելքը:

12. Իսկ ես, ո՞վ թագավոր, այստեղ կարծես ներբողյանի նոր ձև հորինելով և ինչ-որ արտասովոր բան անելով՝ բաղում հոստորներից տարբեր, օգտագործելով դորավարական արվեստը, քո ամենափայլուն հաղթանակները պիտի շարադրեմ: Ես կանգ չեմ առնելու նրանց վրա, ում նկատմամբ դու հաղթանակ չտարար, կամ ում քո նիզակը չհաղթահարեց. առաջիններին հաճախ բախտը ժպտաց, իսկ մյուսներին՝ խոհեմությունը: Ի՞նչ կարիք կա թոյող [թոյունին] հալածել, օրինակ բերիացի⁵⁶ բարբարոսին⁵⁷, ավելի հստակ առած՝ հալեպցուն: Ինչպես ասում են, թուլուններին հալածողը հիմար է:

Ձիուր սանձերն այնտեղից շրջելով, Հալեպից (այս անունը ես հաճախ եմ տալիս, քանզի արեգակն այստեղ շատ ժամանակ է, ինչ չի տեսել հոռմայեցիների մականը), դորքն ուղղեցիր Սեղերի⁵⁸ վրա, որի անունը հունականացնելով կառիսա պիտի կոչենք: Դա Կասիոտիս երկրի ամենահզոր [քաղաքն] է: Ի՞նչ դալուցած լինելով [Հալեպ] քաղաքի դեմ (հարմար չէր այն պաշարել և նրա վրա գրոհել, քանզի շրջակայքում ամեն ինչ ոչնչացվել էր, ո՞չ ջուր կար, ո՞չ կրակ, ո՞չ դինվորների համար պարեն, ձիերի համար՝ կեր, և այդ բոլորը պատճառ: դարձան պաշարման չդիմելու), ահա այդ մեկի փոխարեն դու արարների բաղում քաղաքներ ասպատակեցիր, ամբողջ հարյուր քաղաք գրավեցիր, որոնցից լավագույնը կասիոտական բերդն էր: Դարձյալ արձակածդ շանթերը, դարձյալ քարերի տարափը: Քաղաքի առաջին սատրապը փորձանքը կանխելու համար, ողորմածություն էր հայցում: Բարբարոսի հույսերը իրականացան, քանզի նա մառդասիրության ամբողջ գետերով ողողվեց: Եթե [կայսեր] դիսպոզիցիան ցուցաբերողները ճանաչեցին նրան որպես շանթակիր, որպես շանթահարող ու մորիկ, պաղատելիս նրա մեջ տեսան Փրկչին, բարեկամին և Ողորմածին⁵⁹. հունական աստվածների ածականները նրանք շատ ավելի շոշափելի ձևով քո անձից էին իմանում (ժամանակն ու իրերի գրությունը փոփոխության ենթարկեցին այդ ածականները):

Բարբարոսին գերի վերցնելով, նրան իսկույն ազատ արձակեցիր, նմանվելով Ալեքսանդրին. տեսածդ հաղթանակից հետո, քաղաքը պարտվածներին նվիրեցիր, հաղթանակիդ արդյունքը ոչ թե վերադարձրեց, այլ այն հենց նվիրեցիր բարբարոսներին: Դու վարվեցիր այնպես, ինչպես Ալեքսանդրը Պորո-

54 Կիրիկիայի հայերին նկատի ունի:

55 Ակնարկում է արգոնավորդներին:

56 Բերիան Հալեպի հունական անունն է:

57 Նկատի ունի Զենգի աթաբեկին:

58 Իմա՝ Շիզար:

59 Փրկիչ, Բարեկամ, Ողորմած: Հին հույները այդպիսի ածականներով էին դիմում Զևսին:

սի⁶⁰ հետ, քանզի նրանից թագավորությունը խլելով, նրան դարձյալ թագավոր հաստատեց: Քո այս [բառի] նախանձը ալեքսանդրյան էր, դու ուրիշներու իշխանության վրա նախանձով չես նայում, այլ կարծես ամենից բարձր մի պատվար լինես, քո վրա էս կապում բոլոր շրջանների իշխանությունների փոկերը: Ինձ մի՛ պախարակիր, ո՛վ կայսր, այս բաղդատության համար: Դու իրոք, բազում Ալեքսանդրների գերազանցեցիր...

15. ...Ողջ քաղաքը⁶¹ ողողված էր մարդկանցով, աղմուկով, զարդարված ոսկեթել ծածկոցներով, և ամենատարբեր թանկագին կերպասներով՝ մի տեղ կախմա, մի այլ տեղում՝ գետնին փռած, ապա և [պատերին] ամրացված: Այս քաղաքը քաղաքների թագուհուց⁶² հետո մի այլ թագավորական կացարան էր: Իսկ ինքը շանթահարող [Ջևահիր] նման գեղեցկագույն ձիու վրա բազմած. բազմաթիվ ամբոխի ուղեկցությամբ, փառաբանվելով, բոլորի վրա ուղղում էիր պայծառ ցուլերդ: Ամեն կողմից օդում հնչում էին աղաղակները՝ «կեցցե՛ քաջահաղթ, հաղթանակած, անպարտելի կայսրը»: Ինձ թվում է, որ այն ժամանակ երեխաներն անդամ փառաբանեցին քեզ, Փրկչին նվիրված «Ովսաննա» երգը կիսով չափ քեզ հղեցին: Ինչ վերաբերում է կելտերի ընտրանուն՝ իրենց քաջութիւնը ու փառած պատերազմներով անվանի մարդկանց, նրանք ալստեղ իրենց ռազմի գործերին վերջակետ դնելով, բոլորն էլ հետիոտն համալս ժողովրդի: հետ սասնակեցեցին [քո] հաղթական շքերթին: Նրանցից ոմանք հետևելով էին [քեզ]՝ միանալով ետևից եկողներին, կային և այնպիսիներ, որոնք իրենց նետեցին [քո] ձիու սմբակների տակ:

Ո՛վ դու, հռոմայեցիների ինքնավստահությունը կենդանացնողդ, բարբարոսների հոգին սասանեցնողդ, հռոմայեցիների անցյալում հանգած փառքը վերականգնողդ, անձամբ մեծ հաղթանակներ տանողդ: Պոմպեոսն էլ հայերի դեմ անցյալում հաղթանակներ տարավ, սակայն հաղթողը խուլուլուսն էր, հուկ Պոմպեոսը ուրիշների տարած հաղթանակների առթիվ ինքն էր հաղթական շքերթ կազմակերպում: Իսկ դու ինքդ անձամբ էիր հաղթում, ինքդ էիր սուսլատակ սփռում, քեզ էին բազում հեգեմոններ ուղեկցում հաղթահանդեսներում:

Դեռ անցյալում նվաճված, ո՛վ Անտիոքոսի քաղաք, դու արժանացար տեսներու սուտք գործող օգոստոսափառ կայսերը, որ բազում տարիներ է, ինչ չես տեսել: Քաղաքների թագուհին չի նախանձում քո փառքին, լինելով մալրաքաղաք, կայսեր: քաղաքների փայլը սեփական է համարում և հաղթանակներից բերկրացած, թագավորում է և՛ մեծագործություններով, և՛ փառքով: Քանզի ո՛ր քաղաքներում որ կայսրը եղավ, նրա նիզակը նրանց վրա տարածեց [սալրաքաղաքի] գերիշխանությունը:

16. Ո՛վ Ասիայի վրաից հռոմայեցիներից փախած սիրապետությունը, ետ բերողդ, բարբարոսներին այնտեղից քշողդ, համայն աշխարհը ոչ թե սահմանասյուներով ու գետերով, այլ հաղթասյուներով բաժանողդ... Դու էիր արաբներին, կելտերին, հայերին և կիլիկեցիներին գերեվարողդ:

Բայց նենդ հարևանները՝ այդ Իսմայիր⁶³ (այս ցեղը միշտ էլ անօրեն է և ուխտադրով) կնքված հաշտությունն ու տված եղգումները խախտելով, խուժեց բյութանացվոց երկիրը: Երբ դու նեոկա էս և սուսդ էս փալեցնում, նրանք դողում են քեղանից, սարսափում: Սակայն երբ թաքցնում էս սաղավարտդ՝ հարձակման են անցնում: Բայց դու, որպես արեգակ, ճառագայթներով տն-

⁶⁰ Պոլսը Հնդկաստանի թագավորն էր: Ալեքսանդր Մակեդոնացին նրան պարտության մատնեց, երբ շղթայակապ Ալեքսանդրի մոտ բերեցին, վերջինիս հարցին, թե «ինչպե՞ս վարվես քեզ հետ», նա պատասխանեց. «ինչպես թագավորի»: Ալեքսանդրը նրա հպարտության վրա հիացած, վերադարձրեց նրա իշխանությունը և նորանոր հողեր պարգևեց:

⁶¹ Նկատի ունի Անտիոքը:

⁶² Կոստանդնուպոլիսից:

⁶³ Նկատի ունի Դանիլմանյաններին: Հմմտ. F. Chalandon. Les Comnene. T. II, p. 176.

մատչելի, շարժվելով արևելյան հորիզոնից, անդիմադրելի թափով հասար մեր յորիզոնը, նրանց ամպն ու սշուշը ցրեցիր⁶⁴։ Արեգակի ճառագայթներ առձուկելով, դու բարբարոսներին ցույց տվեցիր շանթային հրո սմբողջ սկավառակը (ես ուղուս ես այստեղ մի փոքր քաղղեբաբանությունամբ⁶⁵ զբաղվել), իսկ մեզ՝ լուսնով ողողված քո սկավառակը։ Եթե նրանք՝ Եփրատի և Տիգրիսի հարևանությամբ ապրողները, ինչպես և Սանդարիոս գետի մոտի բարբարոսները շղանկանան սթողել քո հաղթանակները, թող միմյանց պատմեն իրենց նրեհատամբ գործածող հրաշքները։

Ի՛նչ... Արդ, ես պատմեցի այն շանթերի մասին, որ դու արձակեցիր Ասիա-ի վրա։ Դու ստրկացրիր կիլիկեցիներին և ես խոսքերի տարափ թափեցի, Ասորիքը հնազանդեցրիք և ես չլուցի, հայերին ստրկացրիր և ես որոտացի, ասելով. «Ո՛վ սուսաններ, ո՛վ ճարտասանական և սոփեստական արվեստ, այս բոլորը երկասիրության հույակապ նյութ ես։ Որտե՞ղ և ե՞րբ այսքան մեծ երջանկության ճառագայթ է փայլատապան։ Ո՛վ ամենախմաշտուն ճարտասաններ, ո՛վ ամբողջ աշխարհը շափազողող աշխարհագիրներ, թագավորը մեզ համար նիդանով և պատերազմներով է երկրաշափում աշխարհը, սրունք ձեռք լեզուները, [հարտասաններ], իսկ ձեզ՝ [աշխարհագիրներ], անհայտ քաղաքների մասին նոր դասեր տալիս։

**«ПАНЕГИРИК» МИХАИЛА ИТАЛИКА
И ПРОБЛЕМА ПЕРВОГО ВЕНЦЕНОСЦА
КИЛИКИЙСКОГО АРМЯНСКОГО ГОСУДАРСТВА**

Доктор ист. наук Р. М. БАРТИКЯН

Резюме

Средневековые источники, новые и новейшие исследования показывают, что Киликийское армянское государство в своем развитии прошло два этапа: княжества (1080—1198 гг.) и царства (1198—1375 гг.), и что первым венценосцем был Левон II Рубенид. Однако из опубликованного недавно «Панегирика» византийского ритора Михаила Италика, посвященного победоносному походу византийского императора Иоанна II Комнина в Киликию и Сирию в 1136—1138 гг., явствует, что первым киликийским князем, дерзнувшим надеть царские insignia (диадему, красные сапожки), объявить себя царем, а свое государство—царством, был князь Левон I (1129—1137 г.). Исходя из того, что в соседних странах из армянских царских династий была известна династия Аршакидов, Левон I объявил себя именно Аршакидом. Цель этого шага Левона I—отказ от и de iure вассальной зависимости Киликийского армянского государства от Византийской империи. Это вызвало резкую реакцию византийского двора: последовал поход Иоанна II Комнина, решившего задушить в зародыше стремление армян к полной независимости.

В статье дается сокращенный перевод «Панегирика» Михаила Италика на армянский язык.

⁶⁴ 1138 թ. վերադառնալով Կոստանդնուպոլիսից, Հովհաննես Կոմնենոսը 1139 թ. զարնանը պատրաստվեց պատերազմի կախարհիքյան նկատմամբ ոտնձգություններ կատարող Գանիշմանյան ամիրա Մուհամմադի դեմ, որն առաջնորդ հասավ մինչև Մեանգրոս գետի ակունքները և Եանգարիոս գետը։ Մուհամմադը այս արշավանքի մասին գիտե Գոփգոր Նրեցը (Մատթեոս Արեւայեցի, էջ 369) և Նիկետաս Խոնիատեսը, որն արշավողներին անվանում է «Եկոնիագի պարսիկներ» (սուս տեղում, էջ 31)։ Հարցի մասին հատուկ տե՛ս F. Chalandon-Օր. cit., p. 176.

⁶⁵ Իմա՛՛ ասողաբաշխությունամբ։